

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### Ք Ր Ի Ս Տ Ո Ն Ե Ն Յ Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մարդկութեան սկզբունքը բարձր է քան ազգայնութեան սկզբունքն, որ առաջինի իրացուցման բնական ձևն է, և ազգային պետութիւն, որ չէ կամենում փակուիլ հեթանոսական առանձնութեան մէջ, ուր նա կունենար և իւր առանձին կրօնը, տարբեր բոլոր այլ ազգերի կրօնից, ազգային պետութիւնն, ասում ենք, պէտք է ընդ նմին իրան խոստովանի ճարտաւէր պետութիւն և իբրեւ այգալիսի պետութիւն էլ իրօք իրան պիտի ցոյց տայ իսկ մարդասէր պետութիւնն աւելի փեմ՝ նշանակութիւն ունի, քան քաղաքակիրթ պետութիւնն, որովհետև մարդասիրութեան ամենաներքին և ամենախորին էութիւնն ոչ թէ քաղաքակիրթութիւնն է, այլ բարոյականութիւնն ու կրօնը, բայց որովհետև մարդասիրութիւնն միայն քրիստոնէութեամբ ազատուեցաւ իւր նախկին սահմանափակութիւնից և ստացաւ իրան պատշաճ դիրքն ու նշանակութիւնն և միայն քրիստոնէութեան ազդեցութեամբ կարող է զարգանալ իւր բոլոր արգարութեամբ և լրութեամբ և որովհետև ամեն մարդասիրական գաղափար, չէ քրիստոնէական, աւելի կամ պակաս թերի է ճշմարիտ չէ, ուստի և բուն մարդասէր պետութիւնն նոյնն է, ինչ որ է քրիստոնեայ պետութիւնն և ոչնչով սրանից չէ տարբերուում:

Քրիստոնեայ պետութիւնը մի գաղափար է, որ ներկայումս շատ առարկութեանց հանդիպում է և շատերն երկնչում և մինչև անգամ սոմնչում են նրան նշանակութիւն տալ և ճանաչել նրան: Քրիստոնէական պետութեան հետ կապուած անցեալ չարագործութեանց տպաւորութեան ներքոյ և այն պատճառով, որ ժամանակիս իշխող ոգին ճնշում է գործում մեծամասնութեան վերայ, այդ գաղափարի վերայ նայում են իբրեւ մի մեծ տարակուսութեան վերայ և հարցնում են՝ ի՞նչ գործ և յարաբերութիւն ունի քրիս-



տոնէութիւնը պետութեան և քաղաքականութեան հետ, քանի որ Քրիստոսի թագաւորութիւնն այս աշխարհիցս չէ: Բայց միևնոյն իրաւամբ կարելի կը լինէր և՛ հարցնել, թէ ի՞նչ գործ և կապ ունի քրիստոնէութիւնն ազգերի հետ: Մեր պատասխանն այս մասին այն է, թէ՛ նա՛ քրիստոնէութիւնն ունի նպատակ վրկելու և երջանկացնելու ոչ միայն անհատների հոգիք, այլ՝ նա կամենում է քրիստոնեաց անել ամբողջ ազգերին, սրանց իրան աշակերտացնել և իւր դաստիարակիչ գործողութեանց ազդեցութեան նրանց ենթարկել, և այս կը նշանակէ, թէ՛ նորա նպատակն է Աւետարանի լուսով լուսաւորել, քրիստոնէական ազդեցութեան ենթարկել և՛ պետութիւններն, իրաւագիտական հասարակութիւնք և իրաւագիտական հաստատութիւնք, որոնք միայն կարող են տալ ազգային կեանքին կատարեալ զարգացումն: Առհասարակ չը կայ աւելի անխոհեմ միտք, քան այն հայեցումաձքը թէ պետութիւնն, որ երկրաւոր հաստատութիւններէց ամենից աւելի ամեն ինչ իւր մէջ բովանդակողն է և ընդհանուր պատմութեան մէջ ամենամեծ կշիռ ունեցողը, պէտք է հեռու պահուի քրիստոնէութեան ազդեցութիւններից, ուրեմն և պէտք է ենթարկուի երկրաւոր աւարկաների այն ընդհանուր կերպարանափոխութեան և բարեփոխութեան, որ և՛ քրիստոնէութեան նպատակն է: Պետութեանց քրիստոնէական բնաւորութիւն ունենալու անհրաժեշտութիւնն էականապէս հիմնուած է նորա վերայ, որ պետութիւնը գոյութիւն ունի ոչ թէ՛ այս կամ՝ այն առանձին ստորադրեալ նպատակի համար, այլ՝ նոյն իսկ մարդու համար, որ նորա կոչումն է մատակարարել և մշակել բոլոր արտաքին պայմաններն, որոնք անհրաժեշտ են մարդկային բնութեան բաղմնակողմանի զարգացման և մարդկային երջանկութեան համար: Հէնց այս պատճառով էլ պատշաճաւոր պետական կառավարութիւնն, օրինաւոր վարչութիւնն անշուշտ պէտք է ունենայ հիմնաւոր ճանաչողութիւնը մարդուս էութեան և կոչման, մարդկութեան պատմութեան և սորա վերջնական նպատակի ճանաչողութիւնն, այն վերջնական նպատակի, որ պետութիւնից բարձր է և որ մինչև անգամ՝ նորա շրջանից գուրս է. բայց որոյ համար պետութիւնը պէտք է իրան նպատուիչ



և օգնական միջոց համարէ և որին նա իւր գլխաւոր կարգադրութեանց ժամանակ աչքի առաջ պիտի ունենայ, իբրեւ վերջին վճիռ և նպատակ: Պետութեան նպատակը միշտ սխալ հասկացուած կը լինի, երբ նրան գիտակցաբար չեն կապիլ մարդկութեան նպատակի հետ: Արանով մենք կը գտնանք դէպի բարոյական և կրօնական գաղափարների աշխարհը, դէպի Յայտնութեան աշխարհն, ըստ որում արդարեւ միայն յայտնութիւնն է մեզ ցոյց տալիս գաղափարներ, որոնք մարդկային գոյութեան հիմն են կազմում, որոնք և պետութեան ու քաղաքականութեան կազապարն ու չափն են, սոցա խորին հիմն կազմելով, որովհետեւ նա՝ յայտնութիւնն է մեզ սովորցնում կենսական բարեաց և մարդկային կեանքի զանազան խնդիրների որոշումն և գնահատութիւնն, որոյ իրագործման համար իւր կողմից պիտի հոգայ և պետութիւնն և որոնք ըմբռնելու և հասկանալու համար կտրեւոր է նրան վսեմ և յուսալի կշռադատութեան չափ: Այսպէս զորօրինակ անվիճելի է, որ ամուսնութիւնն և գերդաստանը բոլորովին այլ կշիռ և արժանիք ունենում են, երբ պետութիւնը նոցա վերայ կը նայէ քրիստոնէական հայեցակէտից, որոյ համար Աստուծոյ արքայութիւնը մարդկութեան միակ ամենաբարձր նպատակն է, քան երբ կը նայէ ամուսնութեան վերայ հեթանոսական հայեացքով, որոյ համար պետութիւնն է ամենամեծ բարիքը, մարդկութեան ամենաբարձր նորոտակն, մինչ բոլոր մնացեալը միայն միջոց է պետութեան համար (զորօրինակ Պղատունի հանրապետութիւնը): Բացի սրանից պետութեանց քրիստոնէական ուղղութիւն ունենալու անհրաժեշտութիւնը հիմնուում է և նորա վերայ, որ պետութիւնն արտաքին արդարութեան աշխարհ է, բայց արտաքին արդարութիւնը չէ կարող գործադրուիլ կեանքի մէջ և իրագործուիլ առանց ոգւոյ բարոյական և կրօնական տրամադրութեան, որոյ ազդեցութեամբ է միայն, որ օրէնքները կատարուում են ոչ թէ պատժի, այլ խղճի զրդմամբ և որ (ոգւոյ բարոյական տրամադրութիւնը) միայն ընդունակ է անձնութեան և անձնազոհութեան յօգուտ հասարակութեան, որ նոյնպէս մեզ վերադարձնում է դէպի քրիստոնէութիւն, որ իւր



երկնային քաղաքացիութեամբ ընդունակ է անուամբ երկրաւոր քաղաքացիութեան համար:

Այսպէս ուրեմն քրիստոնէութեան նշանակութիւնը պետութեան և քաղաքացիութեան համար չէ բովանդակուում միայն Աւետարանի առաջուածների մէջ, որոնք անմիջապէս նրանց են վերաբերուում, և որոնք գլխաւորապէս որոշում են պետութեան բնաւորութիւնն, իբրեւ մի աստուածային հաստատութեան և սորա հետ կապուած հնազանդութեան ու արդարութեան պահանջը՝ թէ տո՞ւր զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ (Մատթ. ԻԲ. 21): Քրիստոնէութեան խորին նշանակութիւնը բովանդակուում է ոչ այնքան նորա մէջ, ինչ որ նա արտայայտում է իսկապէս քաղաքացիական մարտի, որքան գեր-քաղաքացիական սկզբունքի մէջ, որ աշխարհ մտել է քրիստոնէութեամբ, մետապոլիտիկական (զուտ, փիլիսոփայական քաղաքացիութիւն) սկզբունքի մէջ, որով մենք հասկանում ենք այն, ինչ որ նախընթաց է և կարապետում է քաղաքական սկզբունքին, իբրեւ նորա հիմն, բարձր է քան զնա իբրեւ նորա նպատակն, այլ քրիստոնէութեան խորին նշանակութիւնը բովանդակուում է նրանում, թէ քաղաքականութիւնը ինչով պէտք է ներշնչուած լինի, իբրեւ հոգւով, իբրեւ հոգեպէս կենդանացողի: Եւ տարբոր: Մետապոլիտիկական սկզբունքն հէնց ճարտար մարդկային բնութիւն և մարդկային կեանքի վերջնական նպատակը որոշող հայեցուածքի մէջ է կայանում և ճշմարիտ մետապոլիտիկական բոտ մեր հայեցուածի է քրիստոնէական աշխարհահայեացքն ու քրիստոնէական հայեցուածքը կեանքի վերայ, հայեցուածք, որ բոլորովին նոր լուսով լուսաւորում է պետութիւնն, որովհետեւ այսպէս սա կապուում է այն պետութեան հետ, որ այս աշխարհից չէ և այս հայեցակէտով նա՝ երկրաւոր պետութիւնը պէտք է իւր գրութիւնը *Քրիստոնէական վիճակ* խոստովանի ու ճանաչի, այն բարձրագոյն վտեմ արքայութեան ծառայելու համար: Յայտնի բան է, Բոսսիւէի կողմից մի տարակուսանք էր, «Քաղաքականութիւն՝ քաղուած Ս. Գրքից» (Politique tirée de la sainte Ecriture) երկասիրութիւն գրելն, որոյ համար նա ստիպուած էր գլխաւորա-



պէս ուշք դարձնելու Հին Ուխտի վերայ, որոյ աստուածայե-  
տական տեսութիւնը միայն հրէից ազգի և սորա բոլորովին առանձին  
վիճակի համար յարմար էր: Ի միջի այլոց այստեղ ուշադրութեան  
առնելու է, որ Խորայէլի պատմութիւնը տիպարական—բնորոշ  
նշանակութիւն ունի և զանազան փոփոխութիւններով նկատողա-  
կան եղանակով մեզ հեռեւեալ ճշմարտութիւնն է բացատրում  
թէ ազգը վայելում է խաղաղութիւն և երջանկութիւն քանի  
որ հաւատարիմ է իւր Աստծուն և թշուառութեան է ենթար-  
կուում: Կորնչում է և օտարների աւար դառնում, երբ հեռա-  
նում է Աստուծմէ, սրան ուրանում: ուրեմն ազգն ինքն ըստ  
ինքեան բաւական չէ և ընդունակ չէ իւր կամքով և իւր ճա-  
նադարհներով առաջ ընթանալու: Բայց յամենայն դէպս թէ այս-  
պէս և թէ այնպէս երևում է ժամանակ առ ժամանակ նորո-  
գուող կարեաց համեմատ մետապոլիտիկան աչքի առաջ ունենա-  
լու անհրաժեշտ պահանջը, գեր-քաղաքական սկզբունքի, մար-  
դուս էութեան և նշանակութեան, նոյնպէս և պատմութեան  
նպատակի վարդապետութիւնքը աչքի առաջ ունենալու պահանջն,  
որոնք ընդ նմին պիտի զննուին պետութեան վերաբերմամբ: Աւ-  
այսպիսի մետապոլիտիկայի համար Սուրբ Վիրքն անշուշտ պէտք  
է լինի առաջին և առանձին աղբիւրն, որից նա պիտի հանէ  
իւր հիմնական գաղափարները: Նա իւր խորգածութեանց նիւթ  
պիտի անէ մի քանի կէտերը Ծննդոց Գրքից, մանաւանդ մետա-  
սաներորդ գլուխն, որ նկարագրում է ազգայնութեանց ծագումն:  
Քաղաքագիտութիւնն առանց մետապոլիտիկայի չէ կարող լինել  
(ինչպէս բնագիտութիւնն առանց բնազանցութեան) որ անխու-  
սելի կերպով յայտ է գալիս, գիտակցաբար կամ անգիտակցաբար,  
և եթէ նա՝ քաղաքագիտութիւնը չունի ճշմարիտ մետապոլի-  
տիկայ, պէտք է անշուշտ ունենայ կեղծը—սխալը: Զորօրինակ  
Մաքիավելլիի և Նապոլէոնի մետապոլիտիկան ճակատագրական էր:  
Մեր ժամանակում կան քաղաքագէտներ, որոնց մետապոլիտիկան  
ծագում է այն հայեցակէտից, թէ մարդս լոկ բանական կենդանի է  
և թէ մարդկային կեանքի նպատակը սահմանափակուում է այս  
երկրով, այս աշխարհով և էսպէս պէտք է կայանայ նիւթական



շահերի բաւարարութեան մէջ: Տարածոյս չր կայ, թէ պետութեան համար որպիսի հեռեանքներ առաջ կը գան, երբ այդպիսի մետապոլիտիկայի հեռեւոյ քաղաքագէտներ մասնակցում են խորհրդներին և իրանց ձայնն են տալիս ու կարծիքը հաղորդում եկեղեցական և դպրոցական խնդիրների վերաբերութեամբ և կամ տմուռնական օրէնսդրութեան խնդիրների վերաբերութեամբ:

Ընդունելով այն հիմնական սկզբունքը, թէ առանց բարոյական գաղափարների, սրանք յենուում են կրօնական գաղափարների վերայ, լինին սոքա ճշմարիտ թէ սխալական, չէ կարող ոչ մի պետութիւն գոյութիւն ունենալ, մենք քրիստոնէայ պետութիւնն որոշում ենք հետեւեալ կերպով: Նա այնպիսի պետութիւն է, որոյ հիմնական բարոյական գաղափարներն որոշուում են քրիստոնէութեամբ, նա իւր հիմնական, գեր-քաղաքագիտական գաղափարներն և զրդիչ թելագրութիւնը գտնում է աշխարհահայեցողութեան և քրիստոնէական հայեացքի մէջ կեանքի վերայ, այսինքն այն հայեցակէտի մէջ, որով Աստուծոյ արքայութիւնը պատմութեան համար կենդրոնի և նպատակի կշիռ ու նշանակութիւն ունի, իսկ ինքը պետութիւնն երկրիս վերայ Աստուծոյ արքայութեան և մարդկային արքայութեան զարգացման միջոցի նշանակութիւնն ունի: Այլապէս ասելով քրիստոնէայ թագաւորութիւնն այնպիսի պետութիւն է, որ քաղաքական առարկնութեան համար այլ աւելի ընտիր և յուսալի հիմն չէ ճանաչում, քան եթէ քրիստոնէութեան մէջ արմատացած հոգւոյ տրամադրութիւնն, որ և նա՝ պետութիւնն ամեն իրանից կախուած հնարներով աշխատում է պահպանել ու պաշտպանել: Պէտք է միայն խոստովանել և այն, որ այն եզանակն, որով հասկանում ու որոշում էին քրիստոնէական աշխարհահայեցողութիւնն ու քրիստոնէական հայեցումը, կեանքի վերայ և սոցա կարեւոր համարուած գործադրութիւնը զանազան ժամանակներում և զանազան հանգամանքներում, ներկայացնում են ոչ պակաս բազմազանութիւն: Մենք հարկաւոր ենք համարում այս մասին յիշեցնել, որ միջին դարերի քրիստոնէայ պետութիւնը շատ տարբերուում է եկեղեցական յեղափոխութեան ժամանակի



պետութիւնից, նոյնպէս թէ Կարլինի գաղափարը քրիստոնեայ պետութեան մասին, ինչպէս և Պուրետանների գաղափարն ոչ պակաս տարբերութեամբ լուտերի գաղափարից այս մասին: Զք նայելով սրան քրիստոնեայ պետութիւնն, իւր բոլոր եղանակների և ձևերի մէջ էլ էապէս տարբերութեամբ բոլոր այլ պետութիւններից իւր գեր-քաղաքագիտական սկզբունքով, թէև սա զանազան եղանակով ձևակերպուած է այլ և այլ գաւառութեանց մէջ: Այս սկզբունքն, որ քրիստոնեայ պետութեան հիմքն է կազմում ունի իւր առանձին որոշ բնաւորութիւնն, որ միակ բացառիկ երևոյթ է ընդհանուր պատմութեան մէջ, մինչև անգամ այնպիսի պետական կառավարչական եղանակներում, որոնց մէջ մենք տեսնում ենք քրիստոնէական պետութեան լոկ ճիւղական ծաղրանկարը:

Բայց ինչպէս որ քրիստոնեայ պետութեան խնդիրն ու պարտքն է մի կողմից տարածել երկրիս վերայ Աստուծոյ արքայութիւնն, իբրև փրկութեան թագաւորութիւն, որքան այս հնարաւոր է արտաքին հաստատութեանց միջնորդութեամբ, նոյնպէս միւս կողմից նա պարտական է կարևոր ուշադրութիւնը դարձնելու ազատութեան արդար պահանջների վերայ և կարգաւորել կրօնի և խօսքի ազատութիւն (խղճի ազատութիւն), համաձայն ժամանակի հանգամանաց: Կրօնի ազատութիւն պահանջում է նոյն իսկ քրիստոնէութիւնն, որովհետև նա ճանաչում է անհատի ազատութիւնն, ազատ ինքնորոշումն խղճի և յաւիտենական երջանկութեան գործերում: Բայց ազատութիւնը պէտք է տրուի այն չափով, որչափ իրապէս անհրաժեշտ է և պէտք է արտայայտուի օրինաց մէջ այլակարծիք անձանց համար: Անսահման և չր կանոնաւոր ազատութիւնը կրօնի, որ առիթ է տալիս և զիւրութիւն ամեն տեսակ աղանդներին հաստատութիւն գտնելու և ըստ իւրեանց ցանկութեան տեղաւորուելու որ և է երկրում, աւելի կրօնական անտարբերութեան, քան կրօնական ներողամտութեան է արտայայտութիւն:



ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՐԷՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՉ:

Արքան քրիստոնեայ պետութիւնը կարող է իրականութիւն դառնալ, այդ կախուած է գլխաւորապէս նրանից, թէ որքան քրիստոնեայ ազգն է իրականութիւն (իսկութիւն): Յայտնի բան է, այս չէ նշանակում, թէ կենդանի անձնական քրիստոնէութիւնն անշուշտ յատուկ է բոլոր անհատներին, որոնք ազգը կազմում են: Այլ կը նշանակէ թէ ազգն ընդհանրապէս իւր ամբողջութեամբ հնազանդում է քրիստոնէական աւանդութեան հեղինակութեան, նորան աշակերտում է, թեպէտ և այդ աշակերտական յարաբերութիւնը նոր սկսուելիս լինի և դեռ ևս տարրական: Բայց հէնց մեր ժամանակում քրիստոնեայ ազգերի մէջ ծագել է ձերբազատութեան ձգտումն—ազատութիւն ոչ թէ միայն անարդար սահմանափակութիւններից, այլ նոյն իսկ քրիստոնէութիւնից, որոյ հեղինակութեան այլ ևս չեն կամենում ենթարկուիլ: Շատերի մէջ—ոչ միայն ազգի բարձր, այլ և ստորին դասակարգերում—հաւատը խախտուած է, հոգիք տմայացել են երկբայութեամբ և անտարբերութեամբ: Յիսուսի Քրիստոսի աւետարանի փոխանակ շատ տարածուել են նորագոյն աւետարանք մարդասիրութեան և երջանկութեան իրանց բանապաշտական, բնապաշտական և նիւթապաշտական վարդապետութիւններով:

Եթէ մենք քրիստոնեայ պետութեան և ազգի մէջ ակնյայտնի կերպով և մեծ ընդարձակութեամբ կատարուող աւերիչ գործողութեան գլխաւոր դօրութիւնքն անուանում ենք անհաւատութիւն և սորա հետ սերտութեամբ կապուած ոչ-կրօնական մարդասիրութիւն, սւստի և պարզ է և առանձնապէս շեշտելով պէտք է աչքի առաջ դնուի իբրեւ ներկայ ժամանակի էական գիծ, կեղծ, անկրօն և անբարոյական անհատականութիւն, որ երևում է իբրեւ մի վարդապետութիւն իբրեւ հակօրինականութեան ձև: Ժամանակի տիրապետող ուղղութեան այս կէտը—պարագան (անհատականութիւնը) նշանակում է այն առանձին եղանակն, որով կատարուում է աւերման և քանդման գործողութիւնը: Կայ ոչ միայն միակողմանի կրօնական անհատականութիւն, որ խախտում



է քրիստոնեայ պետութիւնն և աւերիչ կերպով ներգործում է ազգային միութեան վերայ, բաժանելով նրան զանազան ազանդների և փոքրաթիւ եկեղեցական կուսակցութիւններէ: Այլ կայ և անկրօն ու անբարոյական անհատականութիւն, որ էապէս ետականութիւն է: Աս մտաց այնպիսի կշռազատութիւն է և կեանքի ուղղութիւն, որ գիտակցաբար և իբրեւ մի վարդապետութիւն անհատի երկրաւոր բարօրութիւնը ճանաչում է բարձրագոյն իրականութիւն. սա—կրկնութիւն է հեթանոսական ծարաւին առ բաւականութիւնը և երկրաւոր զուարճութիւնը և ներկայ ժամանակումս յոյժ տարածուած է ու հասած անսովոր լարման, դարձել է զօրութիւն, ոյժ, որ աւերիչ և մահաբեր եղանակով ներգործում է թէ եկեղեցու և թէ պետութեան վերայ, մի ոյժ, որ քանդում է ամեն ինչ, որ կանոնաւորապէս կազմակերպուած է: Հոգեւոր աշխարհում այս ետականութիւնը չէ ճանաչում ոչինչ, որին նա պարտաւոր լինէր հնազանդելու, ենթարկուելու, ամեն բանի վերաբերուում է բացատական և երկբայական եղանակով, բոլոր համոզմունքների վերայ Աստուածային առարկաների վերաբերմամբ նայում է իբրեւ պարզ հայեացքների, հայեցակէտերի և մասնաւոր կարծիքների վերայ, որոնք բոլորեքեան միապէս գին ունին և հաւատարմապէս ճշմարիտ են, որովհետեւ ընդհանրապէս պարտաւորական ոչինչ չը կայ, ոչ մի բան չէ կարող այնպիսի հեղինակութիւն ունենալ, որոց առաջ ամենքը խոնարհէին: Քաղաքական վերաբերմամբ այս անհատականութիւնը պահանջում է, որ պետութիւնն այնպիսի մի հաստատութիւն լինի, որոյ նպատակը լինի միայն պաշտպանել անհատների մասնաւոր շահերն և որ թէպէտ պարտական է ամեն բանի վերայ հագալ, ինչ որ վերաբերում է անձնական ապահովութեան և նիւթական բարօրութեան, բայց չը պիտի ունենայ ընդհանուր բարոյական նպատակներ ու խնդիրներ, ուստի և այս ուղղութիւնը կամենում է կրօնն, արհեստն ու գիտութիւնը մասնաւոր կեանքին վերաբերել: Հասարակական—ընկերական վերաբերմամբ, մարդոց փոխադարձ յարաբերութեանց մէջ ժամանակակից անհատականութիւնը յայտ է գալիս բաղմազան եղանակներով ու ճիւղաւորութեամբ նրանում:



Թէ անհատները փոխանակ միմեանց վերայ իբրեւ համերաշխութեամբ կապուած անձնաւորութեանց, իբրեւ մի յօրինուածութեան անդամների վերայ նայելու, փոխանակ առաքելի ձեթէ վշտանայ ինչ մի անգամն, վշտանան ամենայն անդամքն ընդ նմա (Ա. Կորնթ. ԺԲ. 26) խօսքերն իրանց սեպհականելու, նորա վերաբերում են միմեանց իբրեւ «ինքնուրոյն», «անկախ» անձնաւորութիւնք, «իւրաքանչիւր որ ինքն է իւր մերձաւորը», մարդասիրութիւնն արտայայտուած է միայն նրանով, որ մէկը միւսին չէ սահմանափակում իւր անհատական շահերի մասին հոգալու մէջ. բոլոր յարաբերութիւնք առ այն են ուղղած, որ որքան հնար է մէկը միւսին քիչ պարտաւորուած լինի. բոլոր յարաբերութեանց մէջ պահպանում են այս կանոնը, «թող տուր գործել և առաջ խաղալ», բայց յայտնի բան է անհրաժեշտ սահմանափակութեամբ, որ ինքն ըստ ինքեան ծագում է այն հանգամանքից, որ նոյն գաղափարը պէտք է ամենքի համար նշանակութիւն ունենայ, ուրեմն ամենքն էլ պիտի վայելեն այդ կանոնի իրաւունքն, առանց ուրիշներից սահմանափակուելու: Բայց զի մէկը սիրով համակրէ միւսի շահերին անշահասիրութեամբ, միմեանց օգնելու նպատակով, որ նա զոհ բերել կարողանայ և ամենից առաջ իրան զօհէ, մեծ ընդհանուր բարոյական նպատակի համար, որոյ վերաբերմամբ մասնաւոր անհատները պէտք է ծառայող, նպատակող անդամներ լինին — այս մասին վերոյիշեալ անհատականութեան հայեցակէտով խօսք անգամ լինել չէ կարող:

Ինկերական ետականութիւնն ազատականութեան հոլանեաց ներքոյ ներկայումս առանձին զարգացումն և զօրեղ աճումն է ստացել, ի շնորհս բնական գիտութեանց յառաջադիմութեան և որոս հետ կապուած տիրապետութեանը բնութեան վերայ նոյնպէս և շնորհիւ ձեռագործութեան ու գրամագլխի զարգացման: Վերոյիշեալ հայեցումներն ու կշռադատութիւնն աւելի և աւելի ստարածուեցաւ, որ վնասակար է ամեն բարձրագոյն նպատակների և որ երկրաւոր մասննայն ու երկրաւոր բաւականութիւնքն ամենաբարձր բարիքն է համարում և մեր ժամանակի մարդիկ անխոնջ և կրքոտ եռանդով մրցում են միմեանց դէմ այդ նպա-



տակի համար: Նոքա «կամին մեծանալ» և անկանին ի փորձութիւն և յորոգայթ, և ի բազում՝ ցանկութիւնս անմիտս և վնասակարս, որք ընկզմեն զմարդիկ ի սատակումն և ի կորուստ» (Ա. Տիմ. 2. 9): Նոքա պահանջում են իրանց ետականութեան համար ոչ միայն զգայական այլ և մի տեսակ հոգեւոր բաւարարութիւն և իրանց վրդալեալ ու անհանգիստ ձգտման առարկաներին սովորաբար գաղափարական — լիւթ՝ բնաւորութիւն են վերագրում՝ յատկացնում կոչելով նրանց «քաղաքակրթութեան և լուսաւորութեան բարիք»: Բայց այդ բարիքների առանձին յատկանիշը միշտ այն է, որ նոքա միայն ժամանակաւոր են ու երկրաւոր և իբրեւ այգսլիսիք միայն արժէք ունին: Արհեստն ու գիտութիւնը այս հայեցակէտով ոչ թէ ինքն ըստ ինքեան գնահատուում են, այլ արժէք ունին միայն իբրեւ յաւելեալ զարդ ու զարդարանք երկրաւոր զգայական կեանքի համար: Բոլոր ձգտումների նպատակն է իրանց բնակութիւնն երկրիս վերայ, որքան հնար է, յարմար, վայելուչ, հանգիստ և դուրեկան անել: Նոքա երկրի և ժամանակաւոր կեանքի քաղաքակրթութեան ծաղիկների անուշահոտութեամբ լի օդը միայն շնչել են կամենում, իսկ յաւիտենականութեան օդը նոցա համար շատ սուր է և ծանր: Արտիհետեւ այս գաղափարն ու տրամադրութիւնն անհամաձայնելի են քրիստոնէութեան հետ, ուստի և նոքա զանազան եղանակներով ու միջոցներով հանգէս են գալիս իբրեւ քրիստոնէութեան թշնամիք: Բայց առաւելապէս նոքա յիշում են և կուռում՝ քրիստոնէայ պետութեան դէմ, որովհետեւ քրիստոնէութիւնն այստեղ ցոյց է տալիս իւր հեղինակութիւնը հասարակական կեանքի և սորա հաստատութեանց համար: Թէեւ կան և այլ շատ աւերիչ ոյժեր, որոնք աշխատում են քանդել քրիստոնէայ պետութիւնն և աքսորել սորա սահմանից քրիստոնէական սկզբունքն, բայց վերոյիշեալ ետականութեան գաղափարն ու կշռագատութիւնն այդ ոյժերից ամենանշանաւորն է: Նա մուտ է գործել հասարակութեան ոչ միայն ունեւոր դասի մէջ, որ ունի բաւականութեանց միջոցներ, այլ և չքաւոր դասերի մէջ, որոնք զուրկ են այդ միջոցներից, բայց լի նախանձով դէպի երջանիկները, պապակում են բաւականութեանց ծարաւով: Այս ուղ-



դուժիւնը շատ հեռեւորներ ունի մկրտելոյ մէջ, որոնք քրիստոնեայ են կոչուում և որոնք այս հէթանոս-թէաք<sup>1)</sup> նպատում են աւերման գործին. այս ուղղութեան դօրեղ ներկայացուցին է և՛ ժամանակակից հէթ-թէ-նն, որ մեր ներկայ ժամանակումս սկսել է մեծ դեր խաղալու քրիստոնեայ պետութեան մէջ և որ պատկանում է քրիստոնեայ պետութեան հաստատակամ և անհաշտ թշնամիների շարքին:

Եթէ մենք քրիստոնեայ պետութեան և ազգի մէջ աւերիչ ազդեցութիւն ունեցող ուժերից առաւելապէս հանդէս ենք բերում այստեղ ժամանակակից հրէութիւնն և նորա վերայ կանգ ենք առնում մի փոքր աւելի քան ժամանակակից հեթանոսութեան վերայ, այդ մենք անում ենք այն պատճառով, որ հրէութեան մէջ անտարակոյս հանդէս է եկել նոր այժմ այն ասպարէզում ուր նա վաղ ոչ մի գեր խաղալ չէր կարող: Արտիֆետե վաղ հրէից վիճակը քրիստոնէից մէջ ընկճեալ էր. անվիճելի է, որ նոքա շատ խստութեանց և նեղութեանց պիտի ենթարկուէին քրիստոնէից կողմից, մանաւանդ միջին դարերում, առ որ անշուշտ նոքա իրանք շատ առիթներ տուած են իրանց վաշխառութեամբ: Ապա սկսան ներողամիտ լինել դէպի նոքա և հրէաները ստացան քաղաքական իրաւունքներ: Բայց այն ժամանակից երբ Վրանսիական յեղափոխութեան գաղափարների ազդեցութեան և նոցա վերայ հիմնուած ազատականութեան զօրութեամբ քաղաքական իրաւունքներն անխտիր ամենքին շնորհուեցան, առանց ուշք դարձնելու կրօնի վերայ, այն ժամանակից սկսած, երբ հասարակութեան շատ կապերը խորտակուեցան և անհաստատակամութիւնը թափանցեց մարդոց բոլոր յարաբերութեանց մէջ, հրէաները քաղաքական հասարակութեան մէջ բռնեցին որոշ աստիճան և ոտք

1) Հեղինակը, շատերի նման, ժամանակակից անհաւատութիւնը հեթանոսութիւն է կոչում: սա ճիշդ չէ, որովհետեւ հեթանոսութեան և անհաւատութեան մէջ էական տարբերութիւն կայ. հեթանոսք ունէին և ունին կրօն, թէեւ սուտ, իսկ անհաւատները ոչ մի կրօն չունին, մերժում են անհասարակ կրօնը:



զրին այն ստորագրի վերայ, ուր նորա կտրող են յարձակողական  
 գործողութիւնը սկսել քրիստոնէութեան դէմ: Մենք այստեղ չենք  
 խօսում ուղղափառ—հրէաների, թալմուսի խիստ հետեւողների  
 վերայ, այլ մենք խօսում ենք ժամանակակից հրէաների մեծա-  
 մասնութեան վերայ, որոնք բոլորովին հեռացել են իրանց կրօնից,  
 բայց չեն հրաժարուել իրանց ազգային պահանջներից: Այս ժա-  
 մանակակից հրէաների կրօնն էապէս կազմուած է Վրանսիական  
 յեղափոխութեան աշխարհաքաղաքացիական սկզբունքներից մար-  
 դուս ընդհանուր իրաւանց և սոցա հետ կապուած քաղաքակրթ-  
 ութեան և լուսաւորութեան արտադրած գաղափարների վերա-  
 բերմամբ, որոնք հրէաները լիովին սեպհականել են իրանց և որոնք  
 այժմ նորա հրատարակում են իբրեւ հրէութեան ճշմարիտ բովան-  
 դակութիւնն կամ ոգին, իբրեւ մարդասիրութեան իսկական կրօնն,  
 որոյ իրագործութիւնից նորա սպասում են երկրաւոր մասնական  
 թագաւորութիւնն, երջանկութեան թագաւորութիւնն երկրիս  
 վերայ: Այս պետութեան մէջ խորայելի որդիք, թէ գրամագլխի  
 ուժով և թէ խօսքի, սգւոյ և քաղաքակրթութեան զօրութեամբ  
 պիտի իշխեն բոլոր այլ ազգերի վերայ, որոնց մէջ քրիստոնէու-  
 թիւնն մի հնացած բան է գառնում, որ և վաղուց իւր կեանքն  
 անցուցել, վերջացրել է և այդ ազգերի վերայ ղեկավարող ազ-  
 գեցութիւն պէտք է ի գործ դնեն: Արտիճեաւ այն հայեացքը  
 թէ խորայելի ազգք պէտք է իշխէ բոլոր ազգերի վերայ, թէ  
 խորայելիական ազգայնութիւնը մի արքայական ազգայնութիւն է,  
 որոյ վերաբերմամբ այլ ազգերը պէտք է մի տեսակ հարստա-  
 կութեան յիճակի մէջ լինին, այն հայեացքը ժամանակակից  
 հրէաներն, ինչպէս և իրանց միւս հին ազգային աւանգութիւն-  
 ները բնաւ բարձի թողի չեն արած: Ընդհակառակն ներկայումս  
 նորա շատ ամուր սկիզբն են գրել այդ գերիշխանութիւնն ար-  
 տայայտելու համար, որտիճեաւ նորա ձեռք են բերել երեք մի-  
 ջոցներ, որոնք որոշ ազգեցութիւն ունին թէ ընկերական և թէ  
 քաղաքական կազմակերպութեան վերայ: Դորա են գրամագլխի,  
 մասնակցութիւնը քաղաքական ժողովների (պատգամաւորաց ժո-  
 ղովների) մէջ և վերջապէս մամուլը: Գրամագլխի միջոցով նորա



ազդեցութիւն գործում և քաղաքական գործերի վերայ, երբ խօսք է լինում պատերազմի և խաղաղութեան մասին: Քաղաքական ժողովներում նոքա միշտ միանում են ազատամիտների հետ և ձայն են տալիս յօգուտ կատարեալ բաժանման եկեղեցւոյ պետութիւնից, յօգուտ մերժման գրամական նպատակների եկեղեցական նպատակների համար, յօգուտ քաղաքական ամուսնութեան և այլ ազատամիտ առաջարկութեանց: Եւ լրագրական— պարբերական մամուլն էլ, եւ քաղաքական գլխաւոր պետութեանց շատերի մէջ, երբայցեւոյ ձեռքումն է, որոնք իրանց հանճարեղ և կենդանի յօգուածներով նախապատրաստում են և լարում հասարակաց կարծիքը բոլոր ժամանակակից խնդիրների մասին և մինչև անգամ այդ կարծիքն իրանք որոշում են այն գէտքերում, երբ վէճը այլ և այլ քրիստոնեաց դաւանութեանց մէջ է, անգրիւնականների և բողոքականների մէջ է, պապի և կայսեր մէջ է, յայտնի բան է միշտ խնդիրները եբրայական շահերի տեսակէտից որոշելով: Նորագոյն եբրայական գրականութիւնը հասել է ընդարձակագոյն զարգացման և հրէաներն ամեն հնարաւոր միջոցներով այն միտքն են տարածում, թէ գրականութեան վսեմագոյն կէտն ու ամենագեղեցիկ ծաղիկը կարելի է գտնել ոչ թէ Շիլլերի ու Գէօթէի և ժամանակակից այլ մարգասէր հեղինակների գրութեանց մէջ, այլ շէյնէի, Բերնէի և սոցա նման հրէաց հեղինակների երկերի մէջ, որոնք հանդէս են բերում և պաշտպանում մօբի ազատութեան իրաւունքը սահմանափակ քրիստոնէութեան գէմ, որից իբրեւ թէ կատարեալէս ազատ չեն վերոյիշեալ հեղինակները (Շիլլեր, Գէօթէ և այլք): Ժամանակակից հրէաներն այս հայեացքը համարում են այնպիսի մի ճշմարտութիւն, որը կարող են ուրանալ և նորա գէմ՝ չիճել միայն անկիրթ մարդիկ և նոքա, որոնք աշակերտ են արգէն հնացած հայեցակէտերին: Աւելի հին հեղինակներից մարգասէր հեղինակ համարում են նոքա Վեսինգին, հէնց նորա «Կաթան խմոր» գրութեան համար: Հրէաների վերոյիշեալ նպատակին համեմատ համար, գլխաւոր պայման համարուում է *քրիստոնէութեան* հասարակական կեանքից հեռացելը, Դեբթելը: Այսպէս այս նպատակի համար, որպէս զի բոլորովին գուրս հանեն քրիստոնէութիւ-



նր հասարակական կեանքից, օրէնսդրութիւնից և հասարակական հաստատութիւններից, որպէս զի խղեն բոլոր կապերը, որ կապուած են ազգերը Քրիստոսի հետ, հրէաները գիշեր և ցերեկ աշխատում են, որովհետև Մեսիան, որին հաւատում են քրիստոնէայք և որին հրէաները մերժեցին ու խաչեցին, միշտ խոչընդոտ է լինում նոցա ձգտումներին, իբրև անստանելի քար գայթակղութեան, որովհետև Նորա դաւանումն ազգերի կողմից, օրէնքներն ու հաստատութիւնք, որոնք որ և է կերպով վկայում են Նորա իշխանութեան և թագաւորութեան, նոցա համար գայթակղութիւն են և նոցա վերայ յանդիմանութեան և գատապարտութեան տալաւորութիւն են գործում: Թէ այդ Մեսիան սուա մեսիա է, թէ Նորա արքայութիւնը ցնորք է—ահա այն մոլորութիւնն, որոյ մէջ նոքա ապրում են դեռ իրանց հարց ժամանակից սկսած, ահա այն ցնորքն, որ նոքա աշխատում են իրականացնել և նրանց այս ցնորքի մէջ շատ ամրապնդում են և պահպանում այն ուրացութիւնն, որ երևեցաւ քրիստոնէութեան մէջ և այն անմոռութիւնն ու յանցաւորութիւնն, որոնք շատ տարածուած են քրիստոնէից մէջ և որոց վերայ հրէայք առանձին իմն բաւականութեամբ մատնացոյց են լինում: Իրանց այս գաղափարական ձգտումն իրագործելու համար եբրայեցիք, ինչպէս ասացինք, միանում են և յարում ազատականութեան և բարձրարարաւ քարազում են ներողամտութեան (Toleranz) աւետարանն, որ նոցա հասկացողութեամբ կը նշանակէ, թէ քաղաքական և հաւարական կեանքի մէջ կրօններն անտարբէր պիտի լինին: Յանուն ներողամտութեան նոքա աշխատում են, որ բոլոր կրօնական և եկեղեցական տարբերութիւնք վերանան, ջնջուին և յայտնի բան է ամենից առաջ նոցա վերայ հիմնուած տարբեր իրաւունքները վերանան մէջտեղից, ջանք են անում քրիստոնէութիւնը բոլորովին փակել մատնաւոր կեանքի մէջ, և Նորա նշանակութիւնը լսի մատնաւոր անհատական գործ համարել տալ, մանաւանդ պահանջում են նոքա, որ բոլոր պետական պաշտօններն, առանց բացառութեան, ինչպէս զորօրինակ գաղտնատանական պաշտօններն, ամենքի համար հասանելի լինին և բաց, և կրօնի տարբերութիւնն այդ վերաբերմամբ արգելք չը կարողանայ լինել: Հասա-



բակական դպրոցից նոքա կամենում են դուրս հանել քրիստոնէական կրօնի դատաւորութիւնն և առ առաւելը թոյլ են տալիս միայն ատուածականաց կրօնի դատաւանդութիւնն, ընդհանուր բարոյական գաղափարների հետ, առանց զուտ զրական կրօնական հաւատալեաց յաւելուածի: Նոքա պահանջում են, որ հասարակական դպրոցներում Յիսուս Քրիստոսի անունը յիշուի, իբրեւ հին ժամանակի մի սլաւական անձնաւորութեան անուն, բայց ոչ իբրեւ միակ անուն, որ կարող է մարդաց երջանիկ անել, որովհետեւ այս անարգանք և դրկանք կը լինէր հրէաների համար, այս զիջողութիւնն արգէն եղած է Հոլլանդիայում ազատականութեան օգնութեամբ և շնորհիւ: Երբայեցիք զաշն են կապած ու միացած և՛ ազգային — ազատականութեան հետ և մինչև իսկ յայտնի հանգամանքներում պաշտպանում են ազգային ձգտումները: Բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նոքա այդ անում են ոչ թէ նոյն իսկ ազգայնութեան համար, այլ միայն յանուն անհատական ազատութեան, որին պաշտպան կամենում են հանդիսանալ այդ եղանակով: Արտիհետեւ նոցա ձգտումներն ինքն ըստ ինքեան զուտ աշխարհաբանականութեան բնաւորութիւն ունին, ինչպիսի բնաւորութիւն ունէին Վրանսիական յեղափոխութեան ժամանակ «մարդու իրաւունքները» կոչուած յայտնի գաղափարը: Հեթանոս և հեթանոսութեան ոգւով տոգորուած քրիստոնեայ ազգութեանց, և սոցա մէջ սլաւոնութեան ընթացքում ծագած ու մշակուած յիշատակների և հատաւորութիւնների զարգացման մէջ հրէաները բնաւ շահ և օգուտ չունին: Նոքա չեն կարողանում ոչ մի ազգի հետ կառարելապէս բնութանալ, բնութեանալ, մտաւոր և բարոյական վերաբերմամբ, թէև ամենայն գիւրութեամբ իւրացնում են իւրաքանչիւր ազգի լեզուն և առօրեայ կեանքի տիրապետող վարքն ու բարքը: Նոքա կարող են մի ազգից միւս ազգի մօտ անցնիլ և արտաքուստ ամեն վիճակի յարմարուիլ ու ամենուրեք իրանց իբրեւ իրանց տանը համարել, այն պայմանով, որ գտնեն անհատական ազատութիւն և ազատ ճշմարտութիւն, որոնք նոցա սրտին շատ մօտիկ են: Ազգերի վիշտն և ուրախութիւնը նրանց արտաքուստ միայն վերաբերում են: Իսկ իրանց նոքա համարում են ազգ, իբրեւ հակազրական տարր հեթա-



նոս ազգերի և պաշտօնում են իրանց առաւելութեան—գերազանցութեան զգացմունքը, թէ պէտք է այդ առաւելութիւնն ոչ որ չընդունէր և չը ճանաչէր, բայց իրանցից: Եւ թէգուցէ երբեմն ցոյց տուած էլ լինին նոքա թէ քաղաքական և թէ զուտ մարդկային առաքինութիւնը ինչ, բայց այնուամենայնիւ յաճախ նկատուած է, որ պատմական մեծ ձգնաժամերի միջոցում երբ որոշուում է ազգերի բաղձն, երբ նոցա համար կեանքի և մահուան խնդիր է որոշուում երբ մարդոց որտեքը տատանուում են երկիւղի և յուսոյ մէջ, երբայեցին անխորտակ երազով շարունակուում է իւր շահաբեր գործառնութիւնը և մինչև սիրտը թափանցող սառնութեամբ կարողանում է զբաղուիլ իւր հաշիւներով տոկոսաբեր թղթերի գինը բարձրացնելու կամ իջեցնելու համար և բոլոր հոգւով անձնատուր լինել ձեռնարկութեանց, որոնք կապուած են այդ դրամընթացքի ել և էջի հետ: Աւստի և մենք հանգամանքը չը հասկանալուն միայն կարող ենք փերաբերել այն կարգադրութիւնն, որով երբայեցիներին առանց սահմանափակութեան, միևնոյն քաղաքական իրաւունքներն են տրուում երկրի բնիկների հետ: Բոլոր ազգերի մէջ նոքա ապրում են միայն իբրեւ հիւրեր և նոցա հետ պէտք է ամենայն մարդասիրութեամբ վարուել իբրեւ հիւրերի հետ: Բայց որքան էլ բարեկամաբար վարուելիս լինեն աշխարհումս հիւրի հետ, բայց և այնպէս ոչ որ չէ մտածում նրան իւր տան կառավարութեանը մտնակից անելու: Ներկայ ժամանակումս հրէաներն ազատասիրութեան և ազգային—ազատականութեան գաղափարների հիման վերայ և չափազանց մեծ դրամական կարողութեան շնորհիւ իշխող են դարձել հաւարակութեան մէջ ու աշխարայ կերպով ձգտում են աւելի և աւելի ընդարձակելու իրանց իշխանութիւնը: Բայց այստեղ հարկէ յիշել կանոնը՝ թէ *Respice finem* (գործի վերջին նայիր): Ամեն ծայրահեղութիւն, դիմադրութիւն, հակադարձութիւն է առաջ բերում: Երբայեցիների թշնամին նոյնն է, ինչ որ հանդէս է գալիս իբրեւ թշնամի ազատականութեան, այն է բնկերափարութիւնը (*socialisme*): Եւ իրաւացի են նոքա, որոնք կարծում են, թէ երբ կը գայ այն զարհուրելի ժամն, երբ բնկերափարութիւնն ու հասարակարգութիւնն (*communisme*) առժամանակ ոյժ և զօրութիւն կը ստա-



նան, կերելի թէ որքան քիչ օգուտ բերին հրէաներին կեղծ քաղաքակրթութիւնն, որ երբ կը սկսուի մեծ հալածանքը հարուստների դէմ անշուշտ հրէաներն առաջին զոհերը կը լինին:

Բայց *Respice finem* (վախճանին նայիր) կանոնը պէտք է հասկանալ ընդարձակ և խորը մտքով: Մենք մարգարէի խօսքից գիտենք, որ Աստուած բարձի թողի չարաւ Խւր ազգին և «անզեղ ինչ շնորհքն և կոչումն Աստուծոյ» (Հովմ. ԺԱ. 29), և որ խոտասրտութեան և մղեգնութեան երկարատեւ ժամանակից յետոյ, վերջին օրերում, մարդկութեան պատմութեան վախճանի ժամանակ մեծ փոփոխութիւն կը լինի, տեղի կունենայ խառնելի ազգի վերածնումն, որ կը լինի իրեն «կենդանութիւն ի մեռելոց» (Հովմ. ԺԱ. 15): Այսպէս այս ազգը պատմութեան մէջ այնուամենայնիւ ունի մի տեսակ առաւելութիւն, գերազանցութիւն, ոչ միայն նորա համար, որ օկղբում նրան էին պատկանում որդեգրութիւնն և՛ փառքն և՛ ուխտն և՛ օրէնաստութիւնն, և՛ աստուածալաշտութիւնն ու խոստումն, ոչ էլ միայն այն պատճառով, որ Քրիստոս ըստ մարմնոց նրանից է ծագում, այլ և այն պատճառով, որ նա է այն ազգն, որ իւր աւելի քան հաղարամեայ խոտասրտութիւնից յետոյ, որ ի վերջոյ վշտի բուռն բոցից կը մեղմանայ, կը տայ աշխարհին վերջին մեծ վկայութիւնը, վերջին ազգու և զօրեղ քարոզը Փրկչի մասին, Արին հրէայք խաչեցին և այնքան երկար ժամանակ չէին խոստովանում ու հալածում էին, քանի որ նոցա աչքերը վարագուրուած էին, բայց և՛ Արին վերջին ժամանակ նորա, յաւնթ և ի խայտառակութիւն չը հաւատացող և ուրացող քրիստոնէից, հրապարակաւ, ամենայն հոգւով ու զօրութեամբ, առաջնորդ իրանց ունենալով Պօղոս առաքեալին, կը խոստովանեն Արդի Աստուծոյ կենդանւոյ: Այն ժամանակ կը կատարուի Քրիստոսի տաճարից հեռանալիս ասածը թէ «ասեմ՝ ձեզ՝ թէ ոչ ևս տեսանիցէք զիս յայմհետէ, մինչև ասիցէք՝ օրհնեալ եկեալն յանուն Տեառն (Մատ. ԻԳ. 39): Բայց այժմ գեռ ևս շարունակուում են ածող խոտասրտութեան և մղեգնութեան ժամանակները: Եթէ մենք հարցնենք, թէ ի՞նչպիսի եղանակով և ձևով պէտք է մեզ ներկայացնենք այդ կատարուելու յեղափոխութիւնն, այդ մասին, յայտնի բան է, միայն ենթադրութիւն



կարելի կը լինի անել: Ըստ մեր կարծեաց իրաւացի են նոքա, որոնք կարծում են, թէ այն հալածանքներն, որ վերջին ժամանակներն ամեն կողմից կը սկսուին այդ ազգի գէմ իբրեւ դիմադրութիւն և հակազործութիւն նորա տիրապետութեանը այլ ազգերի վերայ, առիթ կը տան այդպիսի յեղափոխութեան:

Մենք մի փոքր աւելի մանրամասնաբար նկարագրեցինք Խորայէ-լսացւոյ ազգի վիճակն այն պատճառով, որ յիշաւի անհնարին է ուրիշ ազգերին լաւ ճանաչել ու հասկանալ մինչև որ ուշագրութիւն չը դարձնենք այն ազգի վերայ, որ ի սկզբանէ անուի նոցա դիմադրողներն է կազմած և մանաւանդ որ անհնարին է լրիւ հասկանալ և ճանաչել ներկայումս քրիստոնեայ ազգերի ու պետութեանց մէջ կատարուող աւերիչ ու խանգարիչ գործողութիւնն, եթէ մենք չը հետազօտենք այդ էական—իսկական գործիքն (հրէից ազգին): Բայց եթէ մենք այժմ մեր ուշագրութիւնը դարձնենք Խուս աւերիչ ոյժերի վերայ, որոնք միասին գործում են, անհաւատութեան, կեղծ մարդասիրութեան և կեղծ անհատականութեան բազմազան երեւոյթների վերայ և եթէ մենք զննենք այն ներգործութիւնն, որ այդ ոյժերն արել են վարչութեան, օրէնսդրութեան և կարգերի վերայ այլ և այլ պետութեանց մէջ, անշուշտ մենք կը համոզուենք, որ մեր ժամանակակից պետութիւնը կարող են կոչուել քրիստոնեայ պետութիւն, միայն շատ սահմանափակ մոքսով: Եթէ այդ պետութիւնը իրանց աւանդութիւններով, օրէնքներով և հաստատութիւններով, բարքով ու վարքերով ցոյց են տալիս, որ իրանք ազատ չեն եղած քրիստոնեայ գաղափարների ազդեցութիւնից, միևնոյն ժամանակ պարզ է և ակնյայտնի է և այն, թէ ինչպէս նորագոյն ժամանակներս սեպհականած այլ գաղափարներն էլ, որոնք թշնամի են քրիստոնէութեան և սրան շատ և շատ օտար, որոշ կերպով ներգործել են պետութեանց վերայ: Այսպէս նորագոյն սահմանադրական կառավարութիւնը, ձայնատուութեան ընդհանուր իրաւանց, կրօնին օտար պատգամաւորական ժողովների ու նոյնպիսի նախարարների շնորհիւ, ազատ են կացրել իրանց քրիստոնէութեան հեղինակութիւնից, իբրեւ այնպիսի մի առարկայից, առանց որոյ էլ դիւրին է գործել, երբ հարկ է լինում պետութիւնը կառավարել և



օրէնքներ գրել ազգերի կեանքի համար: Միւս կողմից նորա ճանաչում են քրիստոնէութեան անհրաժեշտութիւնն ու հեղինակութիւնը, կարգադրելով ու պահանջելով, թէ պետութեան գլուխն՝ իշխանը պէտք է քրիստոնէական հաւատը դաւանէ: Եթէ զննելու լինինք շատ կառավարութեանց միջոցով, թէ ինչպէս է սա վերաբերում քրիստոնէայ պետութեան գաղափարին, կերեւի որ նորա՝ կառավարութիւնը ոչ համարձակուում են այդ գաղափարին առանձին կշիռ ու նշանակութիւն տալու և ոչ էլ նրանից հրաժարուելու: Ըստ որում իրանց ուղղութեամբ և գաղափարներով առաւել հակուած են դէպի ազատականութիւն և անհատականութիւն, ուստի և կրօնական վերաբերմամբ այդ կառավարութիւնը առանձին նշանակութիւն են տալիս անհատական ազատութեան և սրան հոխանաւորում են: Նորա մի կողմ միւսի ետեւից թուլացնում են և խզում *laissez faire* և *laissez aller* (թող տուր գործել և անցնել) կանոնը ի գործ են դնում և կրօնական ասպարիզում: Միւս կողմից նորա ունին գիտակցութիւն կամ գոնէ անորոշ կերպով զգում են, որ պետութիւնն առանց եկեղեցւոյ չէ կարող մարտել, ուստի և չեն համարձակուում եկեղեցին բոլորովին բաժանել պետութիւնից: Նորա յամենայն դէպս շարունակում են պահելու հին աւանդութիւնքն ու կարգադրութիւնքն, իսկ միեւնոյն ժամանակ թող են տալիս որ աւերման ու խախտման գործողութիւնն անարգել կատարուի: Այլ թէ այդպիսի պետութիւնը քրիստոնէայ պետութիւնը են թէ ոչ, դրան կարելի է և՛ դրական և՛ բացասական պատասխան տալ, կարելի է հաւատալ և ջրել:

Այժմ հարց է առաջ գալիս, թէ ի՞նչ աղաքայ կայ քրիստոնէայ պետութեան առաջ: Մենք այս հարցին պէտք է պատասխանենք, որ այս վերաբերմամբ, ինչպէս յաճախ պատահում է պտտմութեան մէջ, երկու տեսակ հնարաւորութիւն կայ: Կա՞ քրիստոնէայ ազգի մէջ, որ դեռ ևս բաւական պահպանողական կենսական ոյժ ունի իւր մէջ, կրճագի յեղափոխութիւն, նորա հատկացողութեան և տրամադրութեան կալմանէ, իբրեւ հետեւանք նորա ճանաչելուն այն անդունդն, որոյ ամին հասած է մարդկութիւնն և ի շնորհս այդ յեղափոխութեան տեղի կունենան քրիստոնէայ պետական



Հաստատութեանց մէջ վերակենդանութիւնն ու վերանորոգութիւնք: Այս վերանորոգման շնորհիւ աւերիչ պիտի ելլէր զաղարեն գործելուց, կը կապուին ու կը պահպանուին պատշաճ սահմանի մէջ, այնպէս որ անհատականութիւնը կը ստանայ իւր պատշաճ սահմանափակումն, յօգուտ ընդհանուրի շահերին: Եւ կամ ընդհակառակն աւերումն առաջ կերթայ իւր ճանապարհով: Կառավարութիւնք, մինչև անգամ բարձրագոյն իշխանութիւնն էլ աւելի և աւելի կրնկնեն այդ աւերման հոսանքի մէջ. քրիստոնէութիւնն աւելի ևս կը հեռանայ հասարակական կեանքից, ազգերն էլ աւելի և աւելի կը հրաժարուին քրիստոնէութեան ազդեցութիւնից և նոցա ազգային առանձնայատկութիւնք տակաւ առ տակաւ կը հարթուին, կը ոչնչանան մարգասիրութեան վերացական գաղափարների զօրութեամբ և շնորհիւ եբրայեցիների նիւթական և մտաւոր գերիշխանութեան: Յետոյ վաղ թէ ուշ կը ծագի կռիւ ունեւորների և չքաւորների մէջ, ուր գլխաւոր դերը հրէաները կը խողան, կը ծագի ընկերավարական յեղափոխութիւն և ապա, երբ մեղսական հեղեղները կը վազեն կանցնեն, տեղի կունենայ նոր հասարակական կազմակերպութիւնը, բայց բոլոր այս հնարաւոր դիպուածների ժամանակ էլ մենք մեր հայեցակէտը «քրիստոնէայ ազգի» և «քրիստոնէայ պետութեան» վերայ հաստատ կը պահենք, իբրեւ մի չափ կամ իբրեւ մի երեւոյթ, որ անշուշտ պէտք է կատարուի և որի պահպանութեան և զարգացման համար ամեն ոք պարտական է աշխատել: Այն հանգամանքը, որ ներկայումս մենք իրերի այլ յիմակ ենք տեսնում, դա չէ կարող մեր համոզմունքը վախել: Քրիստոնէական բարոյագիտութիւնը չէ կարող ներկայիս իրականութիւնը բանական—հանճարեղ ինչ համարել և չը քննադատել, թէև երկիւղ առաջի լինէր, թէ նորա պահանջները ցնորք կը համարուին: